ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 362-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԿԱԼՈՎ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-089-0018-0004 ԾԱԾԿԱԳՐԻ 0.07638 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմ ասի 24) կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 57-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2023 թվականի նոյեմբերի 3-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 18 արձանագրությունը, ըստ որի 2023 թվականի նոյեմբերի 3-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղում գտնվող 06-089-0018-0004 կադաստրային ծածկագրի 0.07638 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Սամվել Սարգսի Գրիգորյանը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղի կադաստրային քարտեզի 06-089-0018-0004 կադաստրային ծածկագրի 0.07638 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, օտարել Սամվել Սարգսի Գրիգորյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 339150 (երեք հարյուր երեսունինը հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265130238 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. նոյեմբերի 06
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 363-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 04.09.2023թ. N 244-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 06102023-06-0054 վկայականը,Թումանյան համայնքի ավագանու 24 հոկտեմբերի 2023թ. N 80-Ա որոշումը,վճարման անդորրագրերը և հաշվի առնելով որ, Համեստ Ժորայի Գալստյանը ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝
Որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 2-րդ փողոց, թիվ 23 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 04.09.2023թ. N 244-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված 18,02 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 9658,72 (ինը հազար վեց հարյուր հիսունութ դրամ յոթանասուներկու լումա) ՀՀ դրամ և սպասարկման համար զբաղեցրած 0,0018 հա մակերեսով հողամասը՝ 2554,20 (երկու հազար հինգ հարյուր հիսունչորս դրամ քսան լումա) ՀՀ դրամ կադաստրային արժեքներով, ուղղակի վաճառքով օտարել Համեստ Ժորայի Գալստյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 364-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Արայիկ Սերյոժայի Զախարյանի դիմումը,Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,ժառանգության գործ N 298,գրանցված է սեղանամատյանում N 4386 31.10.2023թ. և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Արայիկ Սերյոժայի Զախարյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,գ.Լորուտ (ծածկագիր՝06-045-013-000006) բնակելի տանը և բնակավայրերի կառուցապատման հողամասին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Լորուտ,13-րդ փողոց,10 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 365-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Արայիկ Սերյոժայի Զախարյանի դիմումը,Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,ժառանգության գործ N 298,գրանցված է սեղանամատյանում N 4386 31.10.2023թ. և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Արայիկ Սերյոժայի Զախարյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,գ.Լորուտ (ծածկագիր՝06-045-040-000009) բնակավայրերի կառուցապատման հողամասին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Լորուտ,2-րդ փողոց,14/1 հողամաս >> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 366-Ա

06-004-0012-0034 ԾԱԾԿԱԳՐԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ, 0.03495 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2 -րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով,ՀՀ կառավարության <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ,ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշման Է) կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հաշվի առնելով 17.02.1995թ. տրված սեփականության իրավունքի վկայագիրը /գրանցման գիրք՝ 26-121/, ըստ որի բնակարանը պատկանում է Լիդա Վասիլի Ռամազյանին, Ալբերտ Մադաթի Փիրուզյանին,Նատալյա Անդրեևնա Փիրուզյանին, Արման Ալբերտի Փիրուզյանին և Անահիտ Ալբերտի Փիրուզյանին,իսկ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-004-0012-0034 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության 0,03495 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այն որ սեփականաշնորհված բնակարանը իրենից ներկայացնում է երկրաշարժից տուժած համայնքում քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհված սակավաբնակարան բնակելի տուն և հիմք ընդունելով <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հաշվառման տվյալների մուտքագրման 2023R8G4JJ, ժառանգության իրավունքի վկայագիրը / 20.09.2020թ. գործ N 253, սեղանամատյան 3753/ և Ալբերտ Մադաթի Փիրուզյանի /մուտք՝ 20.09.2023թ. թիվ 540/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0012-0034 ծածկագրում գտնվող 0.03495 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,ք.Թումանյան, 2-րդ փողոց, թիվ 2/1 հասցեում գտնվող տնատիրության ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, իսկ հողամասում գտնվող 1950 թվականին կառուցված 53,60 քմ մակերեսով բնակելի տան և 15,3 քմ մակերեսով բնակելի տան նկուղի նկատմամբ համարել Ալբերտ Մադաթի Փիրուզյանի

(ծնված՝ 05.01.1954թ.), Նատալյա Անդրեևնա Փիրուզյանի (ծնված՝ 29.08.1957թ.), Արման Ալբերտի Փիրուզյանի (ծնված՝ 29.08.1977թ.), և Անահիտ Ալբերտին Փիրուզյանի (ծնված՝ 29.08.1979թ.), ընդհանուր բաժնային սեփականությունը:

2. Անշարժ գույք չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Անշարժ գույքին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 2-րդ փողոց, թիվ 2/1 բնակելի տուն>> հասցեն:

5. ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան, 2-րդ փողոց, թիվ 2/1 հասցեում գտնվող 68.9 քմ մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը փոխել բնակելի տան գործառնական նշանակության:

6. Ալբերտ Մադաթի Փիրուզյանի, Նատալյա Անդրեևնա Փիրուզյանի, Արման Ալբերտի Փիրուզյանի և Անահիտ Ալբերտին Փիրուզյանի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող 06-004-0012-0034 կադաստրային ծածկագրի հողամասում առկա ինքնակամ 1990թ. կառուցված 24,5 քմ մակերեսով բնակելի տունը, 64,0 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը և 57,0քմ մակերեսով նկուղը գրանցել նշագծված տարբերակով:

7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 367-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝

Որոշում եմ.

Թումանյանի համայնքապետարանի կողմից գ.Շամուտ, 1-ին փողոց, թիվ 21 հասցեում գտնվող կադաստրային 06-085-0018-0003 ծածկագրի հողամասում հանդիսությունների սրահի կառուցման համար տրամադրել նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 368-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ /ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596 որոշումով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 29.11.2022թ. թիվ 87-Ն որոշումը, <<Դսեղի Առողջության կենտրոն>> ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի 07.11.2023թ. ակտը և <<Հայաստանի մանուկներ>> ԲՀ -ի կողմից լիազորված անձ Արթուր Տեր- Սիմոնյանի /մուտք՝ 07.11.2023թ. թիվ 651/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Բավարարել <<Հայաստանի մանուկներ>> բարեգործական հիմնադրամի կողմից լիազորված անձ Արթուր Տեր-Սիմոնյանի դիմումը և տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 5-րդ փողոց, թիվ 65 հողամաս հասցեում գտնվող նոր կառուցված << Դսեղի Առողջության կենտրոն>> ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):
2. Շինության ավարտական ակտ (շահագործման թույլտվություն) տրամադրելու համար համայնքապետարանի բյուջե վճարել 5000 ՀՀ դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 369-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԴՍԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԼՈՐՈՒՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2023 թվականի մայիսի 12-ի N 01 /106.3.1/03429-2023, «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2023 թվականի նոյեմբերի 02-ի և «Թումանյան քաղաքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2023 թվականի նոյեմբերի 03-ի գրությունները՝

Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Լորուտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2023 թվականի նոյեմբերի 09 -ին կայանալիք մրցույթներն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի անդամներ՝ Սուրեն Վաչագանի Թումանյան -ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,համայնքի ղեկավար,

Վարդան Սևակի Հովհաննիսյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍԳ համակարգման բաժնի պետ,

Անահիտ Խաչատուրի Բարոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթ և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Արման Հրայրի Մոսինյան -Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,

Համլետ Սոսի Քոչարյան- «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան -Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 370-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2023 թվականի մայիսի 12-ի N 01 /106.3.1/03429-2023 , «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2023 թվականի նոյեմբերի 02-ի և «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2023 թվականի նոյեմբերի 03-ի գրությունները՝

Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Լոռոու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2023 թվականի նոյեմբերի 10-ին կայանալիք մրցույթներն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի անդամներ՝ Դավիթ Սոսի Վանյան -ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,

Վարդան Սևակի Հովհաննիսյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍԳ համակարգման բաժնի պետ,

Անահիտ Խաչատուրի Բարոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Արման Հրայրի Մոսինյան -Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,

Համլետ Սոսի Քոչարյան- «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան -Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 09
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 371-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼՈՐՈՒՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի, Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի ու հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 09-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 5 որոշումն ու Հայարփի Արայիկի Սահակյանի՝ 2023 թվականի նոյեմբերի 09-ի դիմումը ՝
Որոշում եմ.

1.Հայարփի Արայիկի Սահակյանին 2023 թվականի նոյեմբերի 10-ից նշանակել Թումանյան համայնքի «Լորուտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. նոյեմբերի 09
ք.Թումանյան